Հեղինակ՝ Լիլիթ Ավոյան

Նախագծային աշխատանք

Հայոց լեզու, 7-րդ դասարան

| | |
|---|---|
| Ձևաչափ՝ | գործնական նախագիծ |
| Թեմա՝ | խոսքի մասեր |
| Նախագծի անուն՝ | Ռեստորանի ճաշացանկի ստեղծում |
| Տեսակը՝ | անհատական-խմբային |
| Տևողությունը՝ | միջնաժամկետ |
| Վերջնաժամկետ՝ | 2-րդ կիսամյակ |

Նախագծի նպատակները՝

- Ամրապնդել խոսքի մասերի իմացությունը:
- Զարգացնել ճիշտ գրավոր խոսք կառուցելու հմտությունները:
- Նպաստել սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության հմտությունների, ստեղծագործական երևակայության զարգացմանը:
- Խթանել սովորողների պատասխանատվությունը սեփական ուսումնառության նկատմամբ, զարգացնել ժամանակի կառավարման հմտությունները:
- Ձևավորել համագործակցային և սոցիալական հմտություններ:

Նախագծի վերջնարդյունքները՝

**Աշակերտները կկարողանան՝**

- տեղին կիրառել խոսքի մասերը գրավոր խոսքում, տարբերել խոսքի մասերի հատկանիշները ստեղծած ճաշացանկում,
- կառուցել ճիշտ գրավոր խոսք՝ ստեղծելով ռեստորանի ճաշացանկ,
- ցուցաբերել արդյունավետ ինքնուրույնություն, ստեղծագործական երևակայություն և մտածողություն,
- ցուցաբերել պատասխանատվություն թիմային աշխատանքում, արդյունավետ կառավարել և՛ իրենց, և՛ թիմակիցների ժամանակը,
- դրսևորել համագործակցային և սոցիալական հմտություններ:

**Ռեստորանի ճաշացանկի ստեղծում**

**Առաջադրանք**

Պատկերացրե՛ք, որ ձեր թիմին առաջարկել են նորաբաց մի ռեստորանի համար ստեղծել այնպիսի ճաշացանկ, որի վառ ու գունեղ կազմը անմիջապես կգրավի հաճախորդների ուշադրությունը, իսկ համեղ ճաշատեսակների անվանումները կգրգռեն նրանց զգայարանները, և նրանք անհագ ցանկություն կունենան համտեսելու ռեստորանի համադամ խորտիկները:

Այս նախագծի շրջանակում ձեր առաջադրանքն է ստեղծել այդպիսի մի ճաշացանկ՝ հետևելով այս պահանջներին.

1. Ձևավորե՛ք հետաքրքիր, ինքնատիպ, գունագեղ ճաշացանկի կազմ, որի վրա գրված կլինի ռեստորանի անունը(անունը որոշե՛ք ձեր խմբով), և տեղադրե՛ք համապատասխան նկար:

2. Ճաշացանկը պետք է կազմված լինի տարբեր բաժիններից, որոնք պետք է լինեն նկարագարդ, ակնահաճո: Այդ բաժինները պետք է լինեն առնվազն 7-ը: Կարևոր է, որ բաժիններին տրվող անունները լինեն յուրօրինակ և հետաքրքիր, ինչպես օրինակ՝ ***Խրթխրթան***

***նախուտեստներ, Օրվա ապուր, Անուշահամ աղցաններ, Պաղպաղակի սրահ*** և այլն: Թերված օրինակների անունները կիրառել չեք կարող:

3. Յուրաքանչյուր բաժնում ներառե՛ք համապատասխան ուտեստներ, նկարներ: Մտածե՛ք, թե ինչպիսի ինքնատիպ, պատկերավոր անուններ կտաք այդ ուտեստներին, օրինակ՝ ***Սրսուտ կարտոֆիլի ռուլետներ սնկով, «Երեկոյան դողանջ»*** աղցան և այլն: Ամեն բաժնում ներառե՛ք 3 ուտեստ:

4. Ներառե՛ք իրատեսական գին և սեղմ նկարագրություն յուրաքանչյուր ուտեստի համար:

5.Երբ աշխատանքը ավարտեք, ճաշացանկում ***կարմիր*** գույնով կոկիկ ընդգծե՛ք 10 ածական՝ հարաբերական և որակական:

***Օրինակ՝***

Տնական կլոր գաթա՝ ընկույզով շաղախված խորիզով – հատը՝ 1000 դրամ

6. Երբ աշխատանքը ավարտեք, ճաշացանկում ***կանաչ*** գույնով կոկիկ ընդգծե՛ք 10 գոյական՝ գործածված տարբեր հոլովներով:

***Օրինակ՝***

Տնական կլոր գաթա՝ ընկույզով շաղախված խորիզով – հատը՝ 1000 դրամ

7.Երբ աշխատանքը ավարտեք, ճաշացանկում ***կապույտ*** գույնով կոկիկ ընդգծե՛ք 10 թվական՝ բացարձակ, բաշխական, կոտորակային:

***Օրինակ՝***

Տնական կլոր գաթա՝ ընկույզով շաղախված խորիզով – հատը՝ 1000 դրամ

8. Երբ աշխատանքը ավարտեք, ճաշացանկում ***դեղին*** գույնով կոկիկ ընդգծե՛ք 10 անդեմ բայ:

*Օրինակ՝*

Տնական կլոր գաթա՝ ընկույզով շաղախված խորիզով – հատը՝ 1000 դրամ

9. Երբ աշխատանքը ավարտեք, ճաշացանկում **շագանակագույնով** կոկիկ ընդգծե՛ք 3 դերանուն:

**Նախագիծը ներկայացնելու ձևաչափը**

Աշակերտները ճաշացանկը կարող են ստեղծել թղթի վրա. գրել ձեռագիր, նկարել, գունազարդել:

Կարող են ճաշացանկը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ կիրառելով SS գործիքներ:

Դասարանում յուրաքանչյուր խումբ ունենում է 10 րոպե ժամանակ՝ իր ստեղծած ճաշացանկը դասընկերներին ներկայացնելու համար: Խմբի բոլոր աշակերտները համառոտ ներկայացնում են, թե որն է եղել իրենց դերը նախագիծն իրականացնելիս, և ինչ ներդրում են ունեցել իրենք ճաշացանկը ստեղծելու գործում:

**Նախագիծն իրականացնելու քայլեր**

Ուսուցիչը ձևավորում է 4 հոգանոց խմբեր:

Ուսուցիչը աշակերտներին մանրակրկիտ ներկայացնում է նախագծի պահանջները, նախագիծը ներկայացնելու ձևաչափը, գնահատման չափանիշները, ինչպես նաև նախագիծը ներկայացնելու վերջնաժամկետը:

Աշակերտներից յուրաքանչյուրը խմբում ստանձնում է որևէ դեր իր նախասիրությամբ, օրինակ՝ ***նկարիչ-ձևավորող, հետազոտող, գրառող, ստեղծագործող*** և այլն, ու տեղեկացնում է ուսուցչին:

Յուրաքանչյուր աշակերտ խմբում պատասխանատու է և՛ իր ստանձնած դերի համար, և՛ խմբի միասնական աշխատանքի համար:

Յուրաքանչյուր խմբի համար ուսուցիչը նշանակում է խորհրդատվական 1 կամ 2 հանդիպում: Ցանկալի է հանդիպում նշանակել, երբ աշակերտներն արդեն որոշակի աշխատանք կատարել են, և ուսուցիչը կարող է նրանց տալ հետադարձ կապ, ուղղորդել:

Նախագծային աշխատանքն ավարտելուց հետո աշակերտները լրացնում են ինքնաանդրադարձի թերթիկը և հանձնում ուսուցչին:

Ըստ թեմատիկ պլանի՝ նախագծային աշխատանքը դասարանում ներկայացնելու համար տրվում է 2 դասաժամ:

**Ժամանակացույց**

| Խմբի անդամներ | Դերեր | Խորհրդատվական հանդիպումների օրեր | Ներկայացման վերջնաժամկետ |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

**Գնահատման չափանիշներ**

***Ճաշացանկի արտաքին ձևավորում, նկարների առկայություն*** – 20 միավոր

Աշխատանքը կոկիկ է, առկա է գույների ներդաշնակություն, ունի ակնահաճո տեսք, նկարներն ընտրված են տեղին:

***Ռեստորանի, ճաշացանկի 7 բաժինների անվանում***- 15 միավոր

Անունների ընտրության հարցում խումբը ցուցաբերել է ստեղծագործական մոտեցում:

***21 ուտեստների անուններ, կարճ նկարագրություններ*** -25 միավոր

Յուրաքանչյուր ուտեստ ունի ինքնատիպ և պատկերավոր անվանում, ուտեստի նկարագրությունը արված է հարուստ բառապաշարով, գայթակղիչ է հաճախորդի համար:

***Խոսքի մասերի գործածություն*** *՝ - 25 միավոր*

Յուրաքանչյուր խոսքի մասի ամբողջական կիրառման համար տրվում է 5 միավոր:

***Ներկայացում*** – 15 միավոր, որից 10 միավորը տրվում է աշակերտի անհատական ներկայացմանը, իսկ 5 միավորը՝ խմբի ներկայացմանը:

Աշակերտը կարողանում է արտահայտիչ ու համակարգված խոսքով հստակ ներկայացնել խմբում իր ունեցած դերը, գնահատել իր կատարած աշխատանքը:

Խումբը հանդես է գալիս միասնական, համախմբված:

**Ինքնաանդրադարձի թերթիկ**

Ի՞նչ գիտելիք և հմտություններ ձեռք բերեցի ես նախագծային աշխատանքի ընթացքում----------:

Հաջորդ անգամ ի՞նչն այլ կերպ կանեմ----------:

Ուսումնառության ընթացքում ի՞նչն էր դժվար ինձ համար:

Ի՞նչը օգնեց ինձ, երբ ինչ-որ բան շփոթեցնող էր ուսումնառության ընթացքում:

***Զարգացման ենթակա կողմեր՝***

Ես դեռևս վստահ չեմ, թե ինչպես----------:

Ես կարիք ունեմ օգնության կամ աջակցության, երբ ----------: